

ԱԿԱՆԱՎՈՐ ԲԱՆԱՍԵՐ-ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ

(Խ. Սարգսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ*)

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Խ. Սարգսյան-գիտնականը սովետական հայագիտության հասակակիցն է:

Հայաստանի հեղկոմի 1921 թ. փետրվարի 5-ի որոշումով հիմնադրվում է էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը (հետագա վերանվանումով՝ էջմիածնի գիտության ինստիտուտ):

Դա առաջին գիտական հաստատությունն էր մեր վերածնված հայրենիքում: Այս հաստատության շուրջն են համախմբվում հայ մշտական և հոգևոր մշակույթի այնպիսի ականավոր հետազոտողներ, ինչպիսիք են՝ Թորոս Թորամանյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Թադևոս Ավդալբեգյանը, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Խաչիկ Սամվելյանը, Երվանդ Տեր-Մինասյանը, Դավիթ Ամանուկը և ուրիշներ:

1921 թ. օգոստոսին Հայաստան գալով, գիտության այս պատկառելի կաճառին է միանում երիտասարդ բանասեր Խորեն Սարգսյանը: Նա գիտական ասպարեզ էր մտնում գիտելիքների լուրջ պաշարով:

“1972 թ. փետրվարի 15-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտությունների ընդլայնված նիստը՝ նվիրված բանասիրական գիտությունների ղեկավար, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Խորեն Սերգեյի Սարգսյանի ծննդյան 80-ամյակին: Նիստը բացեց գրականության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Մ. Մնացականյանը: Այնուհետև խոսեց Սարգսյանի գիտական գործունեությունը ղեկուցմամբ հանդես եկավ ինստիտուտի տեղադրման թափի վարիչ, բանասիրական գիտությունների ղեկավար Ա. Մ. Ինճիկյանը: խորեն Սարգսյանը և հայ հին գրա-

ավարտել էր Պետրոգրադի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետի պատմական բաժինը, միաժամանակ արեւելյան ֆակուլտետում լսել Ն. Մառի, Ն. Ադոնցի և Ի. Զավախիշվիլու հայագիտական և վրացագիտական դասախոսությունները:

Էջմիածնի գիտության ինստիտուտում Խ. Սարգսյանը ձեռնամուխ է լինում հայ հնատիպ հրատարակությունների ուսումնասիրությանը՝ հայ տպագրության սկզբից մինչև XVIII դ. վերջը:

1922 թ. լույս է տեսնում «Բանքեր Հայաստանի գիտության ինստիտուտի» պարբերազիրը՝ առաջին գիտական օրգանը Սովետական Հայաստանում:

«Բանքերում» հայագիտության ավագ և կրտսեր ներկայացուցիչների հետ մեկտեղ հանդես է գալիս Խ. Սարգսյանը՝ «Լեւոն Աթաբեկյանի պոեզիան» գրականագիտական ներհում ուսումնասիրությամբ: Հետաքրքրական է, որ երիտասարդ բանասերն իր գիտական երախայրիքը մա-

կանությունը թեմային էր նվիրված ավագ գիտական աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Թ. Ավդալբեգյանի ղեկուցումը:

Նիստի վերջում Խ. Սարգսյանի կյանքն ու գիտական գործունեությունը բնութագրող հուշերով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստագիտության ղեկավար, պրոֆեսոր Բ. Վ. Զաբլադնո: Գիտական խորհուրդը հավանություն տվեց Բ. Զաբլանի առաջարկություններին՝ տպագրության պատրաստել Խ. Սարգսյանի գրականագիտական-հայագիտական հետազոտությունները և հրատարակել Խ. Սարգսյանին նվիրված հոգվածների ժողովածու:

խապես ուղարկած է եղել Թումանյանին՝ նրա խմբագրությամբ տպագրության պատրաստվող «Նոր օր» ժողովածուի համար, որը, սակայն, բանաստեղծի Կ. Պոլիս կատարած ուղևորության, ապա և վերահասակատագրական հիվանդության պատճառով լույս չտեսավ:

Էջմիածնի գիտության ինստիտուտի գոյությունը, ցավոք, կարճատև եղավ:

1922 թ. աշնանը Խ. Սարգսյանը աշխատանքի է անցնում Հայաստանի պետական թանգարանում, արխիվային բաժնի վարիչի պաշտոնով: Ութամյա ընդմիջումից հետո (այդ տարիներին նա մանկավարժական աշխատանք էր կատարում Երևանի տարբեր ուսումնական հաստատություններում), 1931 թ. վերադառնում է թանգարան, այժմ որպես գրական բաժնի վարիչ: Իսկ երբ 1935 թ. այդ բաժնի հիմքի վրա կազմակերպվում է գրական թանգարանը, Խ. Սարգսյանը դառնում է նրա դիրեկտորը:

Ծորչ մեկ տասնամյակ աշխատելով գրական թանգարանում որպես բաժնի վարիչ կամ դիրեկտոր, Խորեն Սարգսյանը ջանք չի խնայել հարստացնելու թանգարանը արխիվային նոր ֆոնդերով ու վավերագրերով, կազմակերպելու դրանց պահպանման և գիտական մշակման գործը, գիտական հիմքերի վրա դնելու թանգարանի մշտական էքսպոզիցիան, ինչպես նաև հայ գրողներին նվիրված հոբելյանական ցուցահանդեսները, որոնք նշանակալիորեն նպաստում էին հայ գրականության գիտական պրոպագանդին:

Խ. Սարգսյանը սիրում էր թանգարանը մոլեռանդ սիրով, որը և փոխանցվում էր նրա կրտսեր աշխատակիցներին, ուսանողներին, երիտասարդ բանասեր-գրականագետներին: Նա մեծապես բարձրացրեց թանգարանի հեղինակությունը, իր ջանքերն ուղղեց այն նպատակի իրականացմանը, որ թանգարանը դառնա (և այսօր դարձել է) մեր գիտահետազոտական մտքի կենտրոններից մեկը, մի այնպիսի հաստատություն, որի կողքով չի կարող

անցնել ոչ մի գրականագետ կամ գրականության պատմաբան:

Գրական թանգարանի՝ մեր ազգային հոգևոր մշակույթի գանձարանի պատմության առաջին էջում, նրա հիմնադիր, բազմախոս Երվանդ Շահազիզի կողքին, անկասկած, պիտի արձանագրվի նաև Խորեն Սարգսյանի անունը:

Գիտական աշխատանքի կազմակերպման և ղեկավարման բնագավառում Խ. Սարգսյանի գործունեությունն առավել նշանակալի և արդյունաշատ եղավ հատկապես ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտում, ապա և, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումից հետո՝ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում (1938—1970):

Այդ գիտական հաստատությունների ավելի քան երեսնամյա պատմությունը նշանակալի չափով կապված է Խորեն Սարգսյանի անվան հետ: Գրեթե չի եղել ոչ մի կարևոր ձեռնարկում, որին նա մասնակցած չլիքի որպես հեղինակ, ղեկավար կամ աշխատակից: Հայտնի է, որ գերազանցապես նրա ջանքերով 40-ական թվականների սկզբներին ձեռնարկվեց և ըստեղծվեց «Հայ գրականության պատմության» եռահատոր դասագիրքը, որն, իր թերություններով հանդերձ, ճանապարհ հարթեց հետագա ձեռնարկների համար: Խ. Սարգսյանի նախաձեռնությամբ, ղեկավարությամբ և գործուն մասնակցությամբ իրականացվեցին «Գրական ժառանգություն» և «Պատմա-բանասիրական հետախուզումներ» ժողովածուների, ինչպես նաև Նալբանդյանի երկերի, Խ. Աբովյանի «Վերքի» և Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» ռուսերեն թարգմանության հրատարակությունները:

Նշանակալի է Խ. Սարգսյանի դերը նաև հին և նոր հայ դասական հեղինակների երկերի գիտական հրատարակությունների կազմակերպման գործում: Նրա ղեկավարությամբ կամ մասնակցությամբ

են իրականացվել Թումանյանի, Նալբանդյանի, Աբովյանի, միջնադարյան հայ տաղերգուների գիտական հրատարակությունները: Նա է եղել գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի հիմնադիր-վարիչը: Վերջին տասներկու տարում մեծ եռանդով, սիրով ու հմտությամբ նա էր վարում հայ հին գրականության բաժինը:

Գրականության ինստիտուտի գոյության տարբեր փուլերում վարելով գիտնական քարտուղարի, դիրեկտորի կամ բաժնի վարիչի պաշտոնները, Խ. Սարգսյանի ուշադրության կենտրոնում է եղել երիտասարդ գիտական սերնդի պատրաստման գործը, որի հաջող կազմակերպումը նա համարում էր հայ բանասիրության և ընդհանրապես հայագիտության հետագա զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը:

Խ. Սարգսյանը, որպես գիտական աշխատանքի կազմակերպիչ ու ղեկավար, հազվագյուտ ընտրյալներից էր, որ ուներ բոլոր անհրաժեշտ տվյալները՝ դասական կրթություն, լայն մտահորիզոն, կոտ տրամաբանություն, նուրբ ճաշակ, անքեկանելի կամք, գիտական խիղճ և կողմնորոշում դեպի երիտասարդությունը՝ գիտության ապագան:

Անշրջափակ են եղել Խ. Սարգսյանի գիտական հետաքրքրությունները: Նրա քննասեր միտքը ձգտել է ընդգրկելու հայ գրականության պատմության գրեթե բոլոր շրջանները՝ և՛ հինը, և՛ միջինը, և՛ նորը:

Նրան զբաղեցրել են հայոց հին գրականության խնդիրները, միջնադարյան հայ տաղերգուները, մասնավորապես Սայաթ-Նովան: Բայց առավելապես նրա տեսադաշտում են եղել հայ գրականության XIX և XX դդ.: Այստեղ էլ նա ունեցել է իր նախասիրությունները:

Առաջինը, իհարկե, ոչ ժամանակագրական կարգով, Միքայել Նալբանդյանն է, որին նա մկրտել է երկու ծանրակշիռ մեծագործություն՝ «Նալբանդյանը և լեզվի

հարցերը», «Նալբանդյանի գրական ստեղծագործությունը» և մանր հետազոտությունների մի շարք, որոնց խորագրերն արդեն խոսում են արծարծված հարցերի բնույթի և սահմանների մասին՝ «Նալբանդյանի գրականագիտական հայացքները», «Նալբանդյանի՝ Բելինսկուց կրած ազդեցության մի քանի հարցերի մասին», «Նալբանդյանը Հեգելի փիլիսոփայության քնննադատ», «Ազատության գաղափարը Նալբանդյանի աշխարհայեցողության մեջ»:

Խ. Սարգսյանի այս խոր հետաքրքրությունը հայ հասարակական-քաղաքական մտքի մեծագույն ներկայացուցչի նկատմամբ պատահական չէ, անշուշտ. այն ինչոր չափով առնչվում է նրա՝ Պետրոգրադի համալսարանի ուսանողության շրջանի նախասիրությունների հետ: Հիշենք երիտասարդ Խ. Սարգսյանի դիպլոմային աշխատանքը՝ «Պետտելի քաղաքական հայացքները»:

Հայ մեծ հեղափոխական դեմոկրատին մկրտված Խ. Սարգսյանի ուսումնասիրությունները մշանակալի ավանդ են նալբանդյանագիտության բնագավառում և, անտարակույս, երկար ժամանակ կապահանեն իրենց թարմությունն ու գիտական արժեքը, մասնավորապես վերը հիշված երկու մեծագործությունը՝ խնդիրների բազմակողմանի ընդգրկումով և վերլուծումների խորությամբ: Նալբանդյանի աշխարհայացքի ապագա հետազոտողը չի կարող լուրջ ուշադրության չառնել Խ. Սարգսյանի մի շարք կարևոր հարցադրությունները և եզրահանգումները:

Որպես գրականության պատմաբան, Խ. Սարգսյանը գրական երևույթները քննում էր շրթայական կապի մեջ. Նալբանդյանը չէր լինի ըմբռնելի առանց պարզելու 50—60-ական թվականների գրական մթնոլորտը: Այդ շրջանի հայ գրականության համառոտ տեսությունը Խ. Սարգսյանը տպագրել է «Հայ գրականության պատմության» դպրոցական ձեռնարկի երկրորդ գրքում: Հիշյալ տասնամյակին գրական ասպարեզ մտած և ձևավորված

Պողոսյանը և Աղայանը նույնպես մտնում են նրա նախասիրությունների ոլորտը: Այս երկու գրողներին նվիրված ուսումնասիրություններից կուզեինք հատկապես մատնանշել «Ղազարոս Աղայանը», որ տպագրվել է 1933 թ. հրատարակված «Հայ գրականության պատմության» 2-րդ հատորում: Ի պատիվ Խ. Սարգսյանի պետք է ասել, որ նրա այդ ուսումնասիրությունը առանձնանում է հատորի մյուս գլուխներից, որոնց մեջ գտնիկ սոցիոլոգիզմը արտորդի է հասել: Իր գրապատմական-բանասիրական հետազոտություններում Խ. Սարգսյանը ղեկավարվել է պատմական ճշմարտությանը, փաստերի տրամաբանությանը հավատարիմ մնալու սկզբունքով: Բռնաձիգ, անհիմն եզրակացություններ կատարելու դյուրագայթ ուղին ի սկզբանե անձանոթ է եղել նրան:

Խ. Սարգսյանի գրական-գեղագիտական նախասիրությունների մի այլ, բավական ընդարձակ բնագավառը եղել է XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևելահայ քնարերգությունը: Տեսանք արդեն, որ նրա գրականագիտական երախայրիքը նվիրված էր նախաչարենցյան հայ բանաստեղծության ամենաինքնատիպ ներկայացուցիչներից մեկի՝ Լևոն Աթաբեկյանի ստեղծագործության գեղարվեստական-իմացաբանական խորքի բացահայտմանը:

Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի մասին գրած էություններում Խ. Սարգսյանը տեսնում և տեսանելի է դարձնում այդ տարբեր մեծություններից յուրաքանչյուրի գեղարվեստական մտածողության, զգացմունքների դրսևորման և պատկերավորման ինքնատիպ առանձնահատկությունները, երանգներն ու նրբերանգները:

Խ. Սարգսյանը սոսկ գրականության պատմաբան չէ, որ քննում և գնահատում է արդեն ավարտված, ամբողջացած, պատմություն դարձած գրական երևույթները, նա նաև քննադատ էր՝ այս բառի ճշմարիտ իմաստով, որ քննում ու դատում է գրական երևույթները նրանց ձևավորման, լիակատրության ընթացքի մեջ, կոսմոսում ներառված 4—7

րանց զարգացման միտումներն ու ուղղությունը, առաջին իսկ գրքից որոշում գրողի տաղանդի բնույթը, նրա գեղագիտական իդեալը, ստեղծագործական անհատականության բուն էությունը: Դրա պերճախոս վկայությունը Բակունցի պատմըվածքների առաջին ժողովածուի՝ «Մթնաձորի» վերլուծությունն է, որ, անկասկած, հայ գեղարվեստական քննադատության լավագույն երկերից է:

Խ. Սարգսյանի համար գրականության պատմաշրջանները, ինչպես նաև գրական սերունդները անջատված չեն միմյանցից չինական պարիսպներով. մի պատմաշրջանը մյուսի զարգացման արդյունքն է, գրականության այսօրն անընթեռնելի է առանց երեկվա իմացության, և այսօրն էլ, իր հերթին, հնար է ընձեռում ավելի խոր ու ճշմարտացի իմաստավորելու երեկվա գրականությունը: Եթե Չարենցի «Տաղարանը» ներշնչված է Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ, ապա վերջինս էլ չարենցյան տաղաշարով ընկալվում է նորովի, հայտաբերում է մինչ այդ անտեսանելի իր երանգները:

Ստ. Ջորյանի ստեղծագործության խորքը ընկալելու համար անհրաժեշտ է եղել հետազոտել նրա ազգային ակունքները՝ 10-ական թվականների հայ գրականությունը, որը և կատարել է քննադատը ականավոր գրողին նվիրված իր արժեքավոր մեծագրության ծավալուն ներածականում:

Խ. Սարգսյանի, որպես քննադատի, գեղագիտական սկզբունքները հստակորեն կիրառված են «Հայրենական պատերազմը և գրականությունը» գրքում, ինչպես նաև նախապատերազմյան և ետպատերազմյան մի շարք գրաքննական էություններում:

Բոլոր դեպքերում՝ գրական երկի գնահատության նրա չափանիշները միասնական են. նա հավատարիմ է մնում իր գեղագիտական դավանանքին. չկա մի առանձին «ռազմական գեղագիտություն», որ ենթադրում է զիջումներ, խտրորում գե-

դագիտության պարտադիր օրենքներից: Մեծ բովանդակությունը պահանջում է մեծ արվեստ: Այս խնդրում բացառվում է «մեղմացուցիչ դեպք հանցանացը»: Քննադատի այս հայացքը ժամանակին վեճի տեղիք տվեց: Անկախ դրանից, Խ. Սարգսյանի «Հայրենական պատերազմը և գրականությունը» գիրքը Ս. Աղաբաբյանի գնահատությամբ «այդ շրջանի հայ գրականության պատմության ամփոփ շարադրանքն է» և, ավելացնենք, նույն այդ տարիների ամենատուշագրավ գրականագիտական երկը:

Խ. Սարգսյանի գրականագիտական ժառանգությունը հատկանշվում է ո՛չ միայն ընդգրկումների մեծ շառավիղով (Սայաթ-Նովայից մինչև Պարույր Սևակ), այլև ժանրային բազմազանությամբ: Նա և՛ գրականության պատմաբան էր, և՛ գրականագետ-քննադատ, նաև հմուտ բանասեր-տեքստաբան. դրա փայլուն վկայությունը Պոռշյանի «Հուշերի» և Միք. Նալբանդյանի երկերի ուսերեն երկհատորյակի գիտական հրատարակություններն են:

Խ. Սարգսյանի մեջ միացած էին փաստերի արժեքը խորապես գիտակցող գրականության ճշմարտապատում պատմաբան-բանասերն ու այդ փաստերի իմացաբանական և գեղագիտական խորքը թափանցող գրականագետը: Նրա գրչին են պատկանում և՛ ծավալուն մեծագործություններ

(«Մ. Նալբանդյանի գեղարվեստական ստեղծագործությունը», «Ստեփան Զորյան»), և՛ գրախոսականներ («Մթնաձոր», «Խնձորի այգին»), և՛ դիմանկարներ («Գեղամ Սարյան», «Սիլվա Կապուտիկյան»), և՛ գրաքննական էություններ («Ռավենան և Արարատը», «Սայաթ-Նովյան երանգով, չարենցյան հղացումով», «Մարդու իմացման փայլատակում»):

Խ. Սարգսյանը գրական երկի նրբերանգների, մանրամասների մեջ է հայտնաբերում բանաստեղծի գեղարվեստական մտածողության, անհատականության բնորոշը: Գործածելով Թումանյանի հայտնի ասույթը, կարելի է ասել, որ «նրա համար մի բառը մի աշխարհք է»:

Խ. Սարգսյանը նրբերանգների վարպետ է:

Սայաթ-Նովայի տաղերի, Թումանյանի քառյակների, Իսահակյանի և Տերյանի քնարերգության նրա ներհուն, խորաթափանց վերլուծությունները հաճախ հիշեցնում են մեր տաղանդաշատ ոսկերիչների նրբագեղ արվեստը:

Խորեն Սարգսյանի ժառանգությունը սովետահայ գրական-գեղագիտական մշտքի պատմության ամենավառ էջերից է և ոգեշնչող, ուսանելի շատ բան ունի այսօրվա և վաղվա մեր գրականագետների, բանասերների համար: